# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՆԴՈՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂՆ ՈՐ Ի ԼՈՆԴՈՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Վահան ծ. վարդապետ Յովհաննէսեանից տեղեկացանք, որ այս տարի լրանում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լոնդոնի Մասնաճիւղի հիմնադրման 100-րդ տարեդարձը:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան աւելի քան մէկդարեայ գործունէութիւնը մերձաւորին, նեղեալին ու կարօտեալին օգնելու աստուածային պատուիրանի իրագործումն է ազգային ու եկեղեցական մեր կեանքում: Միութեան հիմնադիրները եւ նրա շուրջ համախմբուած հայորդիները պարտքի զգացումով հոգի, ջանք ու եռանդ բերեցին աստուածօրհնեալ այս հաստատութեան յաջողութիւնների կայացմանը՝ նուիրումով, կեանքով ու գործերով վկայելով իրենց հաւատքը, ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը:

Անհաւասիկ, հիմնադրման հարիւրամեայ յոբելեանն է նշում Բարեգործականի Լոնդոնի Մասնաճիւղը: Ինչպէս ողջ աշխարհում, բրիտանահայ համայնքում եւս Միութիւնը արդիւնաւոր ծրագրեր է կեանքի կոչում՝ միտուած հայորդեաց ազգային, կրթական, մշակութային եւ ընկերային կեանքի զարգացմանը: Բազմիցս լինելով Միացեալ Թագաւորութիւնում, Մենք գոհունակութեամբ ականատես ենք դարձել, որ Բարեգործականը Բրիտանահայոց թեմի եւ ազգային այլ հաստատութիւնների հետ համագործակցութեամբ բարեզարդում է համայնքային կեանքը եւ կարեւոր աւանդ բերում հայորդեաց ազգային ինքնութեան պահպանութեան նուիրական գործին:

Միութեան Լոնդոնի Մասնաճիւղը ազգային մեր կեանքում իր վաստակը հարստացրել է նաեւ հայրենի երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած ծառայութիւններով: Հայրենակերտութեան սրբազան գործին աւանդ բերելու նախանձախնդրութեամբ անցնող տարիներին Միութիւնը հայրենիքում իրականացրել է բարեգործական տարբեր ծրագրեր՝ աջակցելով հանրակրթական դպրոցների, օգնելով ու զօրակցելով կարիքաւոր բազում ընտանիքների եւ երեխաների: Լոնդոնի Մասնաճիւղի հովանաւորութիւնն է վայելում Արցախի Բարեշէն գիւղը, որտեղ հայորդեաց կեանքը բարելաւելու համար ստեղծուում են անհրաժեշտ պայմաններ:

Հայրապետիս համար ուրախութիւն է նաեւ նշել, որ ՀԲԸ Միութեան Լոնդոնի Մասնաճիւղը ամենայն սիրով ու պատրաստակամութեամբ աջակցութիւն է բերում Մայր Աթոռիս երիտասարդ միաբանների կրթութեան կարեւոր գործին՝ հովանաւորելով նրանց ուսումնառութիւնը Մեծ Բրիտանիայի բարձրակարգ հաստատութիւններում:

Հարիւրամեայ յոբելեանի առիթով գնահատանքով ենք յիշում ՀԲԸ Միութեան Լոնդոնի Մասնաճիւղի ննջեցեալ անդամներին՝ աղօթելով նրանց հոգուոց հանգստութեան

համար: Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքներն ենք յղում Մասնաճիւղի Վարչութեանն ու բոլոր անդամներին եւ մաղթում Բարձրեալ Տիրոջ հովանին ու զօրակցութիւնը՝ յանուն ազգօգուտ ու եկեղեցաշէն նոր յաջողութիւնների:

Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում նաեւ Միացեալ Թագաւորութիւնում բնակեալ հաւատաւոր Մեր բոլոր զաւակներին, ի խորոց սրտի հայցելով, որ Փրկիչ մեր Տէրը Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Բրիտանիայի Հայոց թեմը եւ աշխարհասփիւռ մեր ողջ ժողովրդին:

*Մէր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսին. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 10-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ-
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1115